

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հեքիաթն ամենատարածված ժանրն է աշխարհի ժողովուրդների բանահյուսական ավանդության մեջ: Սկզբնավորվելով դարերի խորքից՝ հեքիաթը պատմվել, լրացվել, հղկվել, սերնդեսերունդ փոխանցվել է մինչև մեր օրերը՝ ներառելով հնագույն պատմահասարակական հարաբերությունների, առասպելների, հավատալիքների ու սովորությունների վերապրուկներ: Հայկական հրաշապատում հեքիաթները մեզ են հասել հազարամյակների խորհրդանիշների բարդ բովանդակությամբ: Դրանց բացահայտումները այլ գիտությունների տվյալների հետ միասին հնարավորություն են ընձեռում լուծելու ազգաբանական շատ խնդիրներ, այդ թվում նաև տվյալ ժողովրդի ծագումնաբանության հետ կապված կարևոր հարցեր: Իրենց բովանդակությամբ ու բնույթով հեքիաթները բաժանվում են երկու մեծ խմբի՝ հրաշապատում և իրապատում: Ժողովրդական հեքիաթների հնագույն տիպը կազմում են խորհրդանիշների համակարգ դիտվող հրաշապատում հեքիաթները, որոնց վերծանման բանալին գտնվում է ծիսաառասպելական պատկերացումների խորքերում¹:

Հայաստանի տարբեր պատմաագագրական շրջաններից գրառված ջրարգել վիշապի², անդրաշխարհից վերադարձող ոսկեգօծ ճկույթով ու մազերով հերոսի³, չիտական կնոջ կամ աղջկա⁴ առագաստի գիշերը նորապսակների արանքում դրվող թրի⁵, կարմիր կովի եղջյուրներից սնվող որբ աղջկա⁶, կենդանիների հետ

1 E. M. Мелетинский. Поэтика мифа, М., 1976, с. 36-37.

2 Հայ ժողովրդական հեքիաթներ (պատմեա՝ ՀԺՀ), Բ. II, Երևան, 1959, էջ 23-38, «Ամնահական խրեմտր» (Այրարատ), Բ. VII, Երևան, 1979, էջ 585-597, «Ոսկե խումբիսրումն անդրը» (Մեղրի), Բ. XI, Երևան, 1980, էջ 138-141, «Իսքլանդար» (Տուրուբերան-Հարթ), Բ. XIV, Երևան, 1999, էջ 372-389, «Շահ տոտիլեն» (Վան-Վասպուրական):

3 ՀԺՀ, Բ. VI, Երևան, 1973, էջ 439-445, «Թաքավրերն ու դնվրիշը» (Գանձակ-Տավուշ), Բ. X, Երևան, 1967, էջ 107-116, «Քաչիկի հեքիաթ» (Մուշ-Բուլանըլա) Բ. XIII, Երևան, 1985, էջ 74-90, «Ամնատ ու Մամնատ» (Տուրուբերան-Մուշ):

4 ՀԺՀ, Բ. I, Երևան, 1959, էջ 382-399, «Սոլամազ խանըմի հեքիաթը» (Այրարատ), Բ. VIII, Երևան, 1977, էջ 318-323, «Օֆելի Շամիտի տղեն» (Գուգարք-Լոռի), Բ. XIII, էջ 315-324, «Հեքիաթ Քիշմիշ-Խաթունի ալաչկան» (Տուրուբերան-Մուշ):

5 ՀԺՀ, Բ. I, էջ 149-160, «Առչի տղի անդը» (Այրարատ), Բ. VI, էջ 682-686, «Երեխա չունեցող մարդը» (Գանձակ-Տավուշ), Բ. XV, Երևան, 1998, էջ 153-159, «Թակավրու լաճ ինան դնվրեշ» (Վան-Վասպուրական):

6 ՀԺՀ, Բ. VI, էջ 46-48, «Խորթ ախճըկանը հաքլաթը» (Ղարաբաղ), Բ. VIII, էջ 72-77, «Վարդիկ եզան հեքիաթը» (Գուգարք-Լոռի), Բ. VIII, էջ 387-393, «Ոսկեմագիկը», Բ. XIII, էջ 161-177, «Բոր եզ» (Տուրուբերան-Մուշ):

ամուսնացող հերոս-հերոսուհիների⁷ մասին պատմող հրաշապատում հեքիաթներն իրենց խորքում կրում են հնագույն ժամանակներում լայնորեն տարածված տարիքային մի խմբից մյուսն անցնելու չափահասության խորհրդածեսի վերապրուկներ, պատմական տարբեր ժամանակաշրջանների աշխարհըմբռնման ու կենսահայեցողության հետքեր:

Հայ ժողովրդի բանավոր ստեղծագործությունների, այդ թվում նաև հեքիաթների պարբերական գրառումն ու հրապարակումը սկսվում է 19-րդ դարի վերջին քառորդից՝ եվրոպական երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ, ինչը հարաբերվում էր ազգային ինքնագիտակցության ու մեր ժողովրդի պատմական զարգացման կարևոր խնդիրների հետ:

Հեքիաթի սկզբնավորումից մինչև գրառում հազարամյակներ են անցել: Լինելով հանրային ամենասիրած բանահյուսական ժանրերից մեկը՝ հեքիաթը ստեղծվում է բնօրրանում, բացահայտում այն ստեղծող ժողովրդի առասպելական մտածողությունը, հավատալիքները, ծեսերը, նիստուկացը, նրա աշխարհընկալմանը բնորոշ ձևերն ու առանձնահատկությունները:

Հեքիաթների անցյալում կատարված գրառումներ, մանավանդ բանագիտության այժմյան չափանիշներով չեն պահպանվել: Միջնադարում հավաքված ու գրանցված Արևելքի քաղաքային կյանքի մասին պատմող հանրահայտ հավաքածու է «Հազար ու մեկ գիշեր» արաբական հեքիաթների ժողովածուն, որի պատումները, սակայն, ժողովրդական նյութերի գրառումներ չեն, այլ հեղինակային մշակման ենթարկված տարապատում գրական ստեղծագործություններ:

13-14-րդ դարերում թարգմանաբար կամ վերաշարադրմամբ լայնորեն ճանաչում գտած այնպիսի նյութեր, ինչպիսիք են՝ «Աղեքսանդրի վարքի պատմությունը», «Պղնձե քաղաքի պատմությունը», «Պատմություն աղջկան և մանկան», «Խիկար իմաստունի խրատները», «Պատմություն Ֆարման մանկան պոեմը» համեմատաբար մոտենում են հեքիաթի ժանրին, բայց հեքիաթներ չեն:

Հայ մատենագրության մեջ պահպանվել են մեր ժողովրդի հավատալիքներն ու պատմությունն արտացոլող հին բանահյուսության մի քանի տեսակներ՝ առասպել, վիպասանական երգեր, զրույց⁸: Փավստոս Բուզանդի գրեթե ողջ Պատմությունը շարադրված է ժողովրդական զրույցների հիման վրա և ընդգրկում է «Պարսից պատերազմ»⁹ ավանդական վեպի գերակշիռ մասը, սակայն բուն հեքիաթներ, այսինքն՝ հեքիաթի ժանրին բնորոշ նմուշներ չկան:

Անկասկած վիպական որոշ դրվագներ իրենց մեջ ներառում են հեքիաթային դիպաշարերի հեռավոր հիշողություններ, ինչպես օրինակ՝ «Վիպասանքում» պատմվող զրույցը Արտավազդի մոր՝ Մաթենիկի և վիշապի գաղտնի սիրողության մասին¹⁰, որը հետագայում իր արտահայտությունն է գտել միջազգային հեքիաթագիտության մեջ ընդունված ու կիրառվող Աարնե-Թոմփսոնի (AT) համացույ-

7 ՀԺՀ, հ. I, էջ 400-406, «Ուհան աշըն ու Քոսեն» (Այրարատ), հ. VI, էջ 37-40, «Թաքավերեն տղորցը հաքլաթը» (Վարաբաղ), հ. VI, էջ 77-80, «Օց-Մանուկին հաքլաթը», հ. VII, էջ 598-605, «Զհմբբհտ դուշի նաղըլը» (Մեղրի), հ. XV, էջ 278-283, «Սևոյի սելին» (Վան-Վասպուրական):

8 Մովսիսի Խորենացու Պատմություն հայոց. Քննական բնագիրը Մ. Արեղյանի և Ս շարությունյանի, Երևան, 1981, «Թվելեազ երգեր» (Ա. I, էջ 100), «Վիպասանք» (Բ.ԽԹ, էջ 208), «Շմարտեալ պատմություն» (Բ.ՄԱ, էջ 214):

9 Փաստոսի Բիզանդացու Պատմություն հայոց, Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, Չորրորդ դարություն, Գլուխ ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, Ի, ԻԱ, ԻԲ, էջ 194-218:

10 Մովսիսի Խորենացու Պատմություն հայոց, Ա. I, էջ 100:

ցի¹¹ 590 թվահամարին համապատասխանող հայկական հեքիաթներում, որոնք տարածված են եղել պատմական Հայաստանի մի շարք գավառներում (մեր ձեռքի տակ կա շուրջ 37 տարբերակ, որոնք գրառվել են 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած)¹²:

Հայ ժողովրդական հեքիաթների գրառման մեզ հայտնի անդրանիկ նմուշները (61միավոր) կատարվել են նշանավոր մանկավարժ ու հասարակական գործիչ Առաքել Բահաթրյանի և նրա ազգականներ Ալեքսանի ու Գրիգորի կողմից 1860 թվականին Շուշիում՝ Ղարաբաղի բարբառով: Ձեռագիր այդ հավաքածուն պահպանվում էր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (այսուհետ՝ ԲԱ)¹³: Բահաթրյանների հավաքածուի 61 հեքիաթներից 12-ը Տ. Նավասարդյանը հրատարակել է իր նշանավոր «Հայ ժողովրդական հեքիաթների» չորս գրքերում (VI, VIII, IX, X)¹⁴: Հավաքածուի հեքիաթներից 46-ը տպագրվել են «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության VI հատորի Ղարաբաղին հատկացված բաժնում (ներառյալ նաև վերոհիշյալ 12 հեքիաթները), իսկ մի մասն էլ (15 միավոր) անտիպ վիճակում պահվում է Հայաստանի Ազգային արխիվի համապատասխան ֆոնդում:

1870-ական թվականներից հայ ազգագրության և բանահյուսության ասպարեզում սկիզբ առած հավաքչական բուռն գործունեության նախաձեռնողն ու կազմակերպիչը վաստակաշատ Գարեգին Սրվանձտյանցն էր (1840-1892), ում «Մանանա» ժողովածուում (1876) «Հայրենյաց վեպը և զրույցը» խորագրի տակ տպագրվում են Վասպուրականի հեքիաթների նմուշներ (թվով 9 միավոր): «Համով-հոտով» ժողովածուում (1884) նույնպես Սրվանձտյանցը տպագրում է Արևմտյան Հայաստանից գրառված 26 միավոր հեքիաթ: Գ. Սրվանձտյանցի օրինակով երկու տասնամյակի ընթացքում (1870-1890) լույս են տեսնում մի շարք ժողովրդագիտական (ազգագրական և բանահյուսական) ժողովածուներ¹⁵, որոնց բանահավաքները ազգային մշակույթի մվիրյալ ուսուցիչներ էին, հոգևորականներ, լրագրողներ, հասարակական գործիչներ: 1882-1903թթ. Տ. Նավասարդյանցը հրատարակում է ժողովրդական բանահյուսության նյութերի տասը գիրք, որտեղ ընդգրկվում են Վաղարշապատից, Նախիջևանից, Ղարաբաղից, Վանից, Լոռուց, Կրիմից գրառված շուրջ ութսուն հեքիաթ¹⁶:

11 A. Aarne., S. Thompson., The Types of the Folktale. A Cassification and Bibliography. Antti Aarne's Verzeichnis der Marchentypen. Translated and Enlarged by Stith Thompson, Second Revision, Helsinki, 1964, Academia scientiarum Fennica, p.215-216 .

12 Ավելի մանրամասն տե՛ս Թ. Հայրապետյան. Վիպասանքի հնագույն առասպելների դրսևորումները «Մանան ծոեք» դյուցազնավեպում և հայկական հրաշապատում հեքիաթներում.- «Պատմաբանասիրական հանդես», 2008, 2, էջ 141-155:

13 ԲԱ, Տ. Նավասարդյանի ֆոնդ, գործ I, 2: Ներկայումս վերոհիշյալ ֆոնդը պահվում է Հայաստանի Ազգային արխիվում(այսուհետ՝ ՀԱԱ):

14 Հայ ժողովրդական հեքիաթներ, վեցերորդ գիրք, Թիֆլիս, 1890, էջ 32-33, «Մանկական հեքիաթ»(Ղարաբաղ), ութերորդ գիրք, 1894, էջ 36-39, «Վրեակեքնաքյուլ տղեն հաքյաթը», էջ 48-60, «Ասլան -Բալասուն հաքյաթը», էջ 40-45, «Թաքավերեն տողորը հաքյաթը», էջ 61-62, «Պատավ կնգանը հաքյաթը», էջ 46-47, «Խալ անիմ, խալիչա անիմ, երան մատիմ դիվան անիմ», իններորդ գիրք, Թիֆլիս, 1902, էջ 78-82, «Թաքավերեն տողորը հաքյաթը», էջ 90-95, «Կյասիթ մարթիմ հաքյաթը», էջ 86-89, «Խորթ աղճրկանը հաքյաթը», էջ 83-85, «Բուսակեն հու քաչալեն հաքյաթը», տասներորդ գիրք, Թիֆլիս, 1903, էջ 36-43, «Կյուլ տեռած ախճրկանը հաքյաթը», էջ 44, «Աչքը վահրըկլաժեն, կալիլգյին հու քուսակին հաքյաթը»:

15 Ա. վրդ. Սեդրակյան. Քնար Սշեցվոց և Վանեցվոց, Վաղարշապատ, 1874, Ա. վրդ. Տեր-Սարգսյանց. Պանդուխտ Վանեցիմ, Պոլիս, 1874, Վ. վրդ. Տեր-Միհայայան(Պարտիզակցի), Խոսք գ հայրենյաց, Պոլիս, 1879, Նույնի Անգիր դպրոպթ, 1-2, Պոլիս, 1880, Ս. Սարգսյանց. Ազգուեցոց բարբառը, Մոսկվա, 1883, Հ. Նազարյանց. Նախապաշարմունք, Թիֆլիս, 1878, Մ. վրդ. Բարխուդարյանց, Պլըլը-Պոլի, Թիֆլիս, 1883, Հ. Ալլահվերդյան. Ուլմիա կամ Զեյթուն, Պոլիս, 1885 և այլն:

16 Հայ ժողովրդական հեքիաթներ, 1-10 գիրք, Թիֆլիս, 1882-1903:

1885թ. լույս տեսած Գ. Տեր-Ալեքսանդրյանցի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» բանահյուսական ժողովածուում տեղ էր գտել 45 հեքիաթ¹⁷: Գ. Շերենցի «Վանա սագի» 1-ին և 2-րդ գրքերում զետեղված էին Վասպուրականից գրառված 14 հեքիաթ¹⁸: Վերոհիշյալ ժողովածուներում հրատարակված բանահյուսական-աղագրական նյութերը գրառված են որոշակի թերություններով, քանի որ ժողովրդագիտական գործը հայ իրականության մեջ դեռևս չունեի գիտական սկզբունքներով մշակված անհրաժեշտ չափորոշիչներ:

Հայկական հեքիաթների հրատարակման գործում անուրանալի ավանդ ունի Գրիգոր Խալաթյանը (1858-1912), ում խմբագրությամբ Մոսկվայի Լազարյան ճեմարանի կողմից հրատարակվող «Էմինյան ազգագրական ժողովածուում» տպագրվում են նշանավոր բանահավաք Սարգիս Հայկունու՝ արևելահայերից և արևմտահայերից գրառած հեքիաթներ (100 միավոր): 1887թ. լույս տեսած Գր. Խալաթյանի «Ծրագիրը»¹⁹ մեծ նշանակություն ունեցավ ժողովրդագիտության մեջ գործնական, կիրառական աշխատանքներ կատարելու առումով: «Բանահավաքը մեծ ուշադրությամբ և հարգանքով պետք է վերաբերվի այն բոլոր տեղեկություններին, որ իրան կհաղորդեն կամ ինքը կժողովե անմիջապես... Հարկավոր է դիտել ու գրել այն, ինչ-որ կա, և ոչ թե այն, ինչ որ պետք է լինի՝ բանահավաքի կարծիքով»²⁰: Այսինքն՝ «Ծրագիրը» խիստ կարևորում է հավաքվող նյութերի անադարտ գրառումը՝ պահպանելով բանասացների պատումների բովանդակային, բարբառային, հնչյունաբանական, քերականական, ոճական առանձնահատկությունները, տարբերակների առկայությունը, ազգագրական-բանահյուսական նյութերի համալիր գրանցումը, ինչպես նաև նյութերի գրառման հանգամանքներին վերաբերող տեղեկությունները:

Երախտաշատ ազգագրագետ-բանահավաք Երվանդ Լալայանը²¹, ուսուցչության տարիներից սկսած, ոգեշնչվելով և առաջնորդվելով Գր. Խալաթյանի «Ծրագրով»՝ ջանադրաբար զբաղվել է ժողովրդագիտական նյութերի հավաքչությամբ: Նրա հրատարակված «Մարգարիտներ հայ բանահյուսության»²² եռահատոր ժողովածուի Ա և Բ հատորները պարունակում են Աշտարակի, Օշականի, Փարսիի և Վաղարշապատի հեքիաթները, իսկ Գ հատորում զետեղված են Արևմտյան Հայաստանի որոշ զավառների հեքիաթներ, որոնք գրառվել են Ապարանում: 1915-1916թթ. Եր. Լալայանի կազմակերպած բանահյուսական արշավախումբը Անդրկովկասի քաղաքներում ու գյուղերում ապաստանած արևմտահայ գաղթականներից գրի է առնում ու կորստից փրկում Մշո, Մոկսի, Վանի, Բիթլիսի, Արճեշի, Սասունի, Ալաշկերտի, Բասենի, Շատախի, Բուլանդխի և այլ ազգագրական շրջանների հեքիաթներ (շուրջ 1000 միավոր):

Խոսելով «Ազգագրական հանդեսի» էջերում լույս տեսնող բանահյուսական և ազգագրական նյութերի մասին՝ Եր. Լալայանն ընդգծում է դրանց պատմամշակութաբանական կարևորությունը. «Մեր կոչումն այժմ նյութեր հավաքելն է,

17 Գ.Տեր-Ալեքսանդրյանց. Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885:

18 Գ. Շերենց. Վանա սագ. 1-2, Թիֆլիս, 1885, 1899:

19 Գր. Խալաթյան. Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների. Մոսկվա, 1887:

20 Նույն տեղում, էջ ԺԸ:

21 1896թ. Շուշի քաղաքում Եր. Լալայանը հրատարակում է հայ ազգագրական գիտական անդրանիկ պարբերականը՝ «Ազգագրական Հանդես» (պատմեստ՝ ԱՀ): ԱՀ մնացած բոլոր գրքերը (2-26) տպագրվել են Թիֆլիսում: 1896թ. մինչև 1916թ. հրատարակվել են ԱՀ 20 մեծադիր հատորներ, որոնց անփոփոխ խմբագիրն է եղել Եր. Լալայանը:

22 Մարգարիտներ հայ բանահյուսության. Բ. 1-3, Վաղարշապատ, 1914-1915:

որովհետև դրանց պակասության պատճառով՝ գիտական ուսումնասիրություններն անհնարին են, և մեկ էլ՝ դրանց համար ժամանակ չի պակսի: Մենք կկրենք քարերը և երանի՛ր նրան, ով կգա այդ քարերով ազգային ինքնությունության շենքը կառուցանելու և համամարդկային էվոլյուսիոնի օրենքները գծելու»²³:

Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններից մեր բանահավաքների անձնադիր նվիրումով գրի առած հեքիաթների մի մասը տպագրվել է համապատասխան ժողովածուներում ու հանդեսներում, որոնք ժամանակի ընթացքում սահմանափակ տպաքանակի ու ֆիզիկական մշակման պատճառով սպառվել և դարձել էին հազվագյուտ օրինակներ, իսկ առավել սովոր մասը մնացել էր ձեռագիր վիճակում՝ ցրված տարբեր արխիվներում: Հայ ժողովրդական հեքիաթների բազմահատոր գիտական հրատարակությունը սկսվել է 1959 թվականից՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ընդհանուր խմբագրությամբ՝ նպատակ ունենալով հրատարակ հանել ժողովրդական բանահյուսության հնագույն ժանրերից մեկի՝ հեքիաթի տպագիր և անտիպ ժառանգության ամբողջական ու համակարգված հրատարակություն:

Հայկական հեքիաթների գիտական հրատարակությունն իրականացվել է տեղագրական-ազգագրական հատկանիշների խմբավորման ու տեղաբաշխման, տեքստաբանական միասնական կանոնների մշակման սկզբունքով.

I, II, III հատորներ՝ Այրարատ (աշխատասիրությամբ՝ Ա. Նազինյանի), IV հատոր՝ Շիրակ (աշխատասիրությամբ՝ Մ.Սկրտչյանի), V հատոր՝ Արցախ (աշխատասիրությամբ՝ Ա. Նազինյանի և Մ.Գրիգորյանի), VI հատոր՝ Արցախ-Ուտիք (աշխատասիրությամբ՝ Ա. Նազինյանի և Վ.Սվազյանի), VII հատոր՝ Արցախ-Սյունիք (աշխատասիրությամբ՝ Ա. Նազինյանի և Մ.Առաքելյանի), VIII հատոր՝ Գուգարք-Լոռի (աշխատասիրությամբ՝ Ա. Նազինյանի և Ռ. Գրիգորյանի), IX հատոր՝ Բագրեվանդ, Ալաշկերտ, Մանազկերտ, Բաղեշ (աշխատասիրությամբ՝ Մ. Սկրտչյանի), X հատոր՝ Տուրուբերան-Մուշ-Բուլանջիս (աշխատասիրությամբ՝ Մ.Տարնցու), XI հատոր՝ Տուրուբերան-Հարք (աշխատասիրությամբ՝ Մ.Սկրտչյանի), XII-XIII հատորներ՝ Տուրուբերան-Մուշ (աշխատասիրությամբ՝ Վ. Սվազյանի, Ա. Գազիյանի), XIV-XV հատորներ՝ Վան-Վասպուրական²⁴ (աշխատասիրությամբ՝ Ա. Գազիյանի, Վ. Սվազյանի): Վերջերս լույս տեսած XVI հատորով (Վան-Վասպուրական, աշխատասիրությամբ՝ Ա. Գազիյանի), ամբողջանում է պատմական Մեծ Հայքի Վասպուրական նահանգի և հարակից շրջանների (Վան, Խլաթ, Բուլանջիս, Բզնունիք, Խնուս, Արճեշ, Արծկե, Չարսանճազ) բանահյուսության հեքիաթի ժանրի հոգևոր հարստությունը: Հայ ժողովրդի ազգային-քաղաքական պատմության մեջ նշանակալից դեր խաղացած Վասպուրական աշխարհն ունեցել է հարուստ նյութական ու հոգևոր մշակույթ: Յուցանշական է, որ մ.թ.ա. 9-6-րդ դարերում Վանի հզոր թագավորության գոյությունը հավաստող սեպագիր արձանագրությունների տվյալները հաստատվում են ոչ միայն պատմագրական երկերով, այլև ազգային ավանդությունների ու բանահյուսության մեջ վկայված իրողություններով: Վասպուրականում ծավալված «Սասնա ծռեր» հերոսավեպի որոշ գործողությունների և Վանում գտնվող Միերի դուռ անունով քարայրում փակված

23 Ա.Հ. Ա գիրք, 1896, Շուշի, էջ 3:

24 Հայ ժողովրդական հեքիաթների՝ ըստ հատորների տեղաբաշխման և տպագրության պատրաստման աշխատանքների հետ կապված՝ որոշ հատորների հրատարակության թվերի հաջորդականությունը խախտված է (ՀԺՀ, հ. I, II, Երևան, 1959, հ. III, Երևան, 1962, հ. IV, Երևան, 1963, հ. V, Երևան, 1966, հ. VI, Երևան, 1973, հ. VII, Երևան, 1979, հ. VIII, Երևան, 1977, հ. IX, Երևան, 1968, հ. X, Երևան, 1967, հ. XI, Երևան, 1980, հ. XII, Երևան, 1984, հ. XIII, Երևան, 1985, հ. XIV, Երևան, 1999, հ. XV, Երևան, 1998, հ. XVI, Երևան, 2009):

Փոքր Սիերի մասին գրույցները կենցաղավարում էին Վասպուրականի հայոց հիշողության մեջ մինչև XX դարի սկիզբը:

Տպագրության է պատրաստված «Հայ ժողովրդական հեքիաթների» XVII հատորը, որն ընդգրկում է պատմական Հայաստանի Մոկս Գավառի հեքիաթները (աշխատասիրությամբ՝ Թ. Հայրապետյանի): Հրատարակության են սպասում նաև Ռշտունիք, Պարսկահայք նահանգներից, Շատախ գավառից և Սփյուռքի գաղթօջախներից գրառած հեքիաթների բնագրերը, որոնք ձեռագիր վիճակում պահվում են Բանահյուսական արխիվում և այլ արխիվներում ու նախատեսված են տպագրվելու՝ իբրև գիտական հրատարակության հերթական հատորներ: Ուշագրավ է այն փաստը, որ 1959 թվականից ցայսօր՝ 50 տարվա ընթացքում, լույս է տեսել «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության ընդամենը 16 հատոր, իսկ վերջին 10 տարիների ընթացքում՝ միայն մեկ հատոր:

Այս տեմպերով ընթանալու պարագայում գիտական հրատարակությունը ե՞րբ կարող է ավարտվել: Այս հարցը պետք է մտահոգի Հայաստանի կառավարությանը, ազգային բարեսիրական կազմակերպություններին: Չ՞է որ ժամանակին՝ 1915-16թթ., Եր. Լալայանի բանահյուսական արշավախումբը գերազանցապես գործել է Հայոց ազգագրական ընկերության և հայ բարեգործների միջոցներով: Մինչդեռ վերջին 20 տարիների ընթացքում իրենց բնօրրանից բռնագաղթված աղբրեջանահայերից համեմատաբար քիչ նյութեր են գրառվել: Ի դեպ այս առումով դրվատանքի են արժանի բանագետ Սվետլանա Վարդանյանի անձնական նախաձեռնությամբ ու ջանքերով իրականացվող աշխատանքները:

Ամփոփելով փաստենք, որ «Ազգագրական հանդեսի», «Էմինյան ազգագրական ժողովածուի», դրանց հիմնադիրներ Եր. Լալայանի ու Գր. Խալաթյանի թողած հարուստ ժողովրդագիտական ժառանգության, ինչպես նաև 1959թ.-ից ցայսօր հրատարակվող «Հայ ժողովրդական հեքիաթների» ակադեմիական բազմահատորյակի բնագրերի ուսումնասիրությունը իրենից անգնահատելի արժեք է ներկայացնում հայ գիտական ազգագրության ու բանահյուսության համար:

Թամար Լ. Հայրապետյան
բանաս. գիտ. թեկնածու

Summary

ON THE WRITING AND SCIENTIFIC PUBLICATION. IN ARMENIAN PEOPLE'S FAIRY-TALES

TAMAR L. HAYRAPETYAN